



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





49.99

-74







այս.

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

# ՀԱՅ ԼԵՋՈՒՆ

491.99  
-----  
5-74

Գ Ր Ե Ց



Ս Բ Բ Ո Ւ Տ Ի Տ Բ Ի Ս Ս Ե



Վ Ա Ճ Ա Ռ Ե Լ Ի

Ի Ն Պ Ա Ս

## ԴՊՐՈՑԱՄԵՐ ՀԱՅՈՒՆԻՆԻ

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ը Ն



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

1 8 8 0



1002  
5634

12213-42

RECEIVED

GENERAL INVESTIGATIVE

DEPARTMENT OF JUSTICE

1944

WASHINGTON, D.C.

1944

REPORT OF THE

COMMISSION

1944

ON THE

ACTS



Ա Ռ Օ Ր Ի Ո Ր Դ Ս

Դ Պ Ր Ո Յ Ա Ս Ի Ր Հ Ա Յ Ո Ի Հ Ե Ա Յ

Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Ե Ա Ն


Հա՛յ կոչսանք, չքնաղ ճաղկոչնք Հայ գարնան, ձեզ կը  
 նոշիրեմ այս դոզգնաքեայ գիւմ էջերն : Առաքիւնի իբրեւ ըզ  
 կոյսն Հռիփսիմէ որուն հովանւոյն ներքեւ դաստիարակ-  
 ունեցաք, ձեր հաճոյքը, միտքն ու սիրտը նոշիրեցիք Ազգին  
 դատերց աղքատիկ, որունք 'ի ձեզ գտան մայրեր գորովաշից  
 և անձնուէր դաստիարակներ, ինչպէս և դոչք երթեմն գը-  
 տաք մայր մը յայնմ՝ որ զձեզ սիրեց անհոշն սիրով և բա-  
 գուն մարիներ իբրեւ վանան կանգնեցաւ ձեզ համար : Որ-  
 չափ նորա սիրտը կը խայտայ արդ՝ երբ կը նկատէ թէ սեր-  
 մունքն որ ցանեց ճշեցան, աճեցան գեղարքողքոջ և իշրեանց  
 բոյրը կը տարածեն շուրջ գիշերեւ : Հա՛յ կոչսանք, դոչք  
 յոյսն էք, դոչք ապագան էք, ձե՛զ աշխատութիւնը, ձե՛զ պա-  
 տիշը :





# Ա Շ Խ Ա Ր Հ Ա Բ Ա Ռ

## Հ Ա Յ Լ Ե Ջ Ո Ւ Ն



Լեզուն թարգմանն է մտայ . նովաւ մեր պէտքերը կը  
✓ յայտնենք , ուրիշներու հետ ի հաղորդակցութիւն կը մըտ-  
նանք , նովաւ կը կատարուի մեր կարծեաց բացատրութիւնը .  
նովաւ զմարդ իկ կը բորբոքեն կամ կը հանդարտեցնեն , մերթ  
որոտընդոստ պերճախօսութեամբ մղելով զանոնք դէպ ի  
հուրն և ի սուր , և մերթ մեղմ և սրտագրաւ խօսքերով  
մեղմացնելով նոցա կիրքերը որոնք կը շառաչեն իբրեւ բարձ-  
րագէզ կոհակներ , և իւրեանց թաւալմամբը կ'սպառնան  
խորտակել ընկերական կարգադրութիւնը : Լեզուով է վեր-  
ջապէս որ արարածը կը հաղորդակցի իւր արարչին հետ , և  
նովաւ է որ կը դոյանան ընդ մէջ տկարութեան և զօրու-  
թեան այն սքանչելի յարաբերութիւնները որոնք զճանրա-  
բեռնեալ հողին կ'սփռուին : Մէկ խօսքով լեզուն մարդկային  
պէտքերէն մէկն է , և որչափ միտքը մշակուի և զարգա-  
նայ՝ նոյնչափ ալ լեզուն կը կատարելագործուի :

Նախնի ժամանակաց մէջ երբ մարդկութիւնը իւր որրա-  
նին մէջն էր , երբ ծանօթութիւնք , դաղափարք և պէտք  
անձուկ սահմանի մէջ կ'ամփոփուէին , մարդկային գատողու-  
թիւնը կ'ըմբռնէր միայն ինչ որ իւր տեսութիւնը կը գրաւէր .  
նորա պէտքերը կը դոյանային այն կոշտ և անհրաժեշտ ա-  
ռարկաներէն որոնք կենաց առաջին մատակարարութիւննե-  
րը կը հայթայթեն , ուստի գործածած բառերն ալ իւր սահ-  
մանեալ ծանօթութեանց և պիտոյից կը համապատասխանէին :

Սմենայն ժողովուրդ մանկութեան հասակէն կ'սկսի և  
✓ աստիճանաբար իւր խանձարուրքէն մերկանալով յարբունս



կը հասնի : Արչափ ժողովուրդ մը յառաջագիւմէ նոյն համեմատութեամբ իւր մտաց մէջ նոր գաղափարներ , նոր լոյսեր կը ցոլանան որոնցմէ կը ծնանին նոր պէտքեր , նոր ալ բառեր կը գոյանան որով լեզուն կը ճոխանայ : Լեզուէ մը կրնայ դատուիլ մասամբ իւր ժողովրդեան մը յառաջագիւմութեան և կամ անկախութեան աստիճանը : Եթէ մեր հայկական լեզուին համառօտ տեսութիւնը ընելու ըլլանք կը տեսնենք թէ իւր կրած փոփոխութիւնները յինքն կը կրէ զոգին ժամանակին և այն ազգաց որոնք տիրեցին Հայաստանի մշտաւորական և կամ սրոյ զօրութեամբ :

Մեր նախնի մատենագրութիւնը կը բաղկանար աւանդական երգերէ զորոնք սերունդները իրարու հաղորդեցին իրբեւ նուիրական ժառանգութիւն : Յետոյ այն ազօտ լոյսն որ ծաւալեց դիտութիւնն դպրութեանց նսեմ աշխարհին մէջ մթնցաւ թերութենէն հայկական տառից և անբաւականութենէն տառից ասորեւտանցւոյ զորոնք գործածեցին հայերը , մթնցաւ նաեւ պատերազմական արկածներէ և այն չարիքներէ որոնք անբաժանելի են ի նոցանէ :

Հինգերորդ դարուն մէջ հայկական տառերը հաստատուեցան և նոյն ժամանակը գնացին հայերը քաղել զուսումն ի Յունաստան որն որ իւր սոկեգարովն կը պանծայր յայնժամ : Երբ վերագարձան նոքա ի Հայաստան՝ մեր դպրութիւնը պայծառացուցին յունական ընտիր ճաշակովն , և սոկեգար մ'ալ յարգարեցին ի Հայ երկիր : Անգորն ու խաղաղութիւնը որոնք անհրաժեշտ են մատենագրական զարգացման համար վրդովեալ ըլլալով յերկպառակութեանց և յարտաքին շփոթութեանց , մատենագրական ճաշակը օր աւուր ասրականեցաւ : Արարացի ազգեցութիւնն աղետալի եղաւ մանաւանդ մեր լեզուին , իմաստից չափազանցութիւնը և բառերուն շռայլ կրկնութիւնը ազարտեց լեզուին վսեմ պարզութիւնը հինգերորդ դարուն , վերջապէս միշտ օտար ազգեցութիւնք ներգործեցին հայերենին վրայ :

Հայ ազգը՝ երերածուփ ընդ մէջ այն փոթորկաց որոնք



ժողովրդոց մտտակայ կորուստը կը գուժեն, դպրութեանց փարոսին օրհասական լուսովն իւր մահը լուսաւորեց: Կորսրնցուց Հայաստան վերջապէս իւր անկախութիւնը, նորա բաժանումը կատարուեցաւ, և իւր զաւակներն գնացին ցիրուցան ի տար աշխարհ:

Հայերը տարբեր երկիրներու մէջ ապրելով, տարբեր պետութեանց հպատակելով, տարբեր օրինաց հնազանդելով, տարբեր եզան և նոցա շահերը, լեզուն և բարքերը: Իւրաքանչիւր բաժնուած մասն Հայոց՝ կրեց ազդեցութիւնը զինքն նուաճող զօրութեան: Բնական օրէնք է որ հզօրը իւր լուծին հետ միատեղ ընդունիլ տայ և իւր սովորութիւնները, բարքերն ու լեզուն:

Երբ ժողովուրդ մը իւր ընկերական վիճակը կը կորսնցընէ, երբ իւր կենսական հիւթը ոչ եւս իւր ծոցէն կը քաղէ և կը հնազանդի այն օտար ազդեցութեանց որոնց ներքեւ կը գտնուի, իւր սեփական կերպարանքն ու ձիրքերը կը կորսնցնէ, և եթէ կրօնական պարիսպն անզգայի է կը միանայ շատ անգամ այն տիրապետող զօրութեան ուր իւր իսկութիւնը կը ջնջուի: Այսու եղանակաւ զանազան հին ազգաց ծագման հետքը անյայտ ըլլալով շատ մը ծուռ ենթադրութեանց տեղի են տուած:

Տաճկաբնակ Հայը դիւրակեցիկ կենաց վայելչութեանց և մտաւորական թանձրամած խաւարին մէջ տակաւ առ տակաւ հայրենի յիշատակներն և աւանդութիւնները կորսրնցուց. նախահարց կրօնքն և անունը պահեց միայն, իւր լեզուն իսկ վերածուեցաւ տաճկախառն հայերենի մը. դադրեցուց իւր յարաբերութիւնները օտարաբնակ ազգայիններուն հետ, օտարացաւ նոցա, զի մեռած էր իւր հոգւոյն մէջ ազգասիրութեան զգացումն՝ որն որ յազթահարելով հեռաւորութեանց, արդելից և ժամանակին, հոգիները կը միացնէ և անխորտակելի շղթայիւք կը միացնէ զանոնք:

Սակայն ժողովուրդները յաւիտենական կուրութեան չեն նախասահմանեալ. անյուսալի պատճառ մը շատ անգամ քունէն յարթութիւն կը մղէ զանոնք:



Ժամանակին անբռնարարելի ազգեցութիւնը փոփոխութիւններ պատճառեց 'ի Տաճկաստան, բազմացաւ անդ Եւրոպական տարերքը, յարաբերութիւններ գոյացան, նոր կարծիքներ ծնան, նոր աշխարհ մը ձեւացաւ, նոր լոյս մը ծագեցաւ՝ որով Հայը իւր ազխտութիւնը ճանչցաւ, գիտութեան հարկն զգաց, և եղանակ մը փնտռեց իւր միտքը լուսաւորելու :

Պօլսոյ մէջ գտնուած ուսումնական միջոցաց անբաւականութեան պատճառաւ, Հայ պատանեկութիւնը խուժեց 'ի վեներաիկ, Բատուա, վիէննա և փարիզ ուր ազգային վարժարաններ հաստատեցին Մխիթարեանք : Հմուտ և ազգասէր կղեր մը ուսումնական սերունդներ պատրաստեց ու նոցա մատաղ հոգւոց մէջ ազգասիրութեան հուրը վառեց : Երանի թէ յաջորդ Մխիթարեանք հաւատարիմ մնալով այդպիսի աղնիւ օրինակի, կեդրոնը ըլլային ուր բոլոր ազգային իղձերը ձկտէին :

Վերադարձաւ Հայ երիտասարդութիւնը 'ի Պօլիս, տարածեց այն առաջին կայծերը զորոնք յետագայ սերունդները հետզհետէ աճեցուցին : Ոգեւորեցաւ ազգասիրութիւնը, ցնցեց թմրած Հայերը, կեանքն ևռաց նոցա երակաց մէջ, ու նոքա Հայութեան արշալոյսն սղջունեցին :

Ազգ որ նոր բարոյական կենաց կ'արթննայ նոր լեզուի մ'ալ կը կարօտի, որ համապատասխանէ իւր պիտոյից : Քրքաբառը թէև կանոնաւոր և հարուստ լեզու մը, սակայն չէ այնչափ գործածական իրրև զաշխարհարառ, և մանաւանդ թէ մեծ դժուարութիւններ կը յարուցանէ նա աշխարհիկ լեզուէն բոլորովին տարբերելովը, մինչև անխմանալի ըլլալու գրեթէ նոցա համար որոնք հայերենի մասնաւոր գիտութեան չեն զբաղած :

Եւրոպական գրական լեզուները կը տարբերին գործածական լեզուէն բացատրութեանց բարձրութեամբն և բառերու ընտրութեամբը. իսկ լեզուին հիմունքը և ձևերը նոյն են :



Յունարէնը բացառութիւն մ'է այս մասին , և շատ մը դժուարութեանց տեղի կուտայ . վասն զի այժմեան Յոյները աշխարհարբառ լեզունին հին գրական լեզուն վերածելու աշխատելով՝ յունարէնի գիտութեան ընթացքը 6 կամ 7 տարիներու մէջ կը լրանայ արդ գպրոցաց մէջ . ստեղծելի կորուստ ժամանակի :

Բարեբաղդարար մենք Եւրոպական ազգաց օրինակին կը հետեւինք աշխարհարբառ լեզուն կիրառութեամբը : Սակայն աշխարհարբառը կանոնի վրայ հիմնուած չըլլալով անխիտանութեան մէջ կը ծփայ : Իրաւ է որ ամենայն լեզու սոյն անկարգ վիճակէն պէտք է որ անցնի , շատ մը փոփոխութիւններ կրէ մինչև որ հաստատուի և որոշ կերպարանք մը զգենու : կը տեսնենք պատմութեան մէջ թէ ինչպէս լեզուները կը ծնանին , կը թոթովեն , կը յառաջադիմեն , կը դառնամին , կը հիւժին իբրև ազգերն որոնց կը վերաբերին և բաղդակից են , և ինչպէս ինոցանէ կը սերին ուրիշ առոյգ լեզուներ որոնք զուգընթաց կ'երթան ժամանակին ոգւոյն հետ : Մեր գրաբառը նաև իւր բարձրագոյն կէտին հասնելէն վերջը հետզհետէ ազարտեցաւ , և այն մայր լեզուէն յառաջ եկաւ աշխարհարբառը , որնոր իւր շրջանը հաղիւ թէ սկսած է և զորն պիտի շարունակէ զուգընթաց ազգային յառաջադիմութեան հետ , ըստ պահանջմանց բնական օրինաց . վասն զի ժողովրդոց ընթացքը նոյն հարկին առջև , և նոյն պայմաններու մէջ , գրեթէ նոյն եղանակաւ կը կատարուի . և իրօք եթէ ակնարկ մը նետելու ըլլանք ազգաց պատմութեանց վրայ , կը տեսնենք թէ ժողովրդոց գլխաւոր բարոյական դիժերը մեծ նմանութիւն մը կ'ընծայեն : Նոցա մանկութիւնը , երիտասարդութիւնը և զառամութիւնը՝ մի և նոյն ընկերական վիճակին մէջ , տեղի են տուած նոյն պիտոյից և նոյն ձեռնարկութեանց , նոյն կատարելութեանց և նոյն բարձրութեանց , նոյն թերութեանց և նոյն սխալմանց , նոյն անկման և կորստեան : Չեւերը կը տարբերին անշուշտ ժամանակին ոգւոյն , ժողովրդոց բնու-



թեանց և սովորութեանց համեմատ, սակայն սկզբունքը նոյն է :

Տարիներ յառաջ քսնի մը ազգայիններ փորձեցին յող-  
գող և անկանոն աշխարհաբառը նոր կանոններու վրայ  
հաստատել . շատ աշխատութիւններէ վերջը կանոնադրու-  
թիւն մը 'ի լոյս ընծայեցին ուղղախօսութիւն անուանեալ, և  
այն ընդունելութիւն չդատաւ : Արդի երիտասարդութենէն  
ուսանք կը ջանան ուղղախօսական դրութիւնը իւր աճիւններ-  
րէն վերակենդանացնել . սակայն նոցա փորձերը մեծ յաջո-  
ղութիւն մը չեն խոստանար նաև : Այսու հանդերձ կը հան-  
դիպի երբեմն որ անօգուտ կարծուած սկզբունք մը յինքն  
այնպիսի կէտեր կը պարունակէ որ նոր տեսութեան մը շար-  
ժառիթ կ'ըլլայ, և թերեւս ուղղախօսական կանոններէն ու-  
սմանք մեր լեզուին որոշ ձեւակերպութեան ծառայեն յա-  
պագայս :

Յետոյ Մեծն Պէշիկթաշեան, որ իւր կարծատե կեան-  
քըն ազգային յառաջադիմութեան նուիրեց, աշխարհաբա-  
ռին մասնաւոր կերպարանք մը տուաւ իւր ոճոյն զարմանա-  
լի գեղեցկութեամբն և թատերական երկասիրութեամբքը :  
Մերթ 'ի լուր իւր փանդոան մեր վաղեմի քաջերը իւրեանց  
պատանքը թօթափելով՝ թատերաբեմէն կուզային ճառել  
անցեալ փառքը և ախար արկածները հայրենեաց . մերթ  
իւր մեղամաղձոտ քնարը կողբար կողկողագին 'ի վերայ շիր-  
մաց իւր սիրելեաց . իւր մեղեդիք ախար էր յայնժամ 'իր-  
բեւ զկոծ մօր յուսահատ որ կ'ողբայ իւր մանկան թափուր  
որրանին վրայ : Եւ մերթ իւր սխրացեալ հոգին կ'երգէր ա-  
նոյշ իբրև գարնանային սոխակը : ) Հայերը լսեցին սրտագին  
ձայնը Պէշիկթաշեանի և սքանչացան . սպրդեցաւ նա իւր-  
եանց հոգւոյն մէջ և տիրապետեց լիազօր : Ազգատիրութեան  
հուրը զօրաւոր շնչովն արժարժեց Պէշիկթաշեան . Հայոց  
մէջ նոր յառաջադիմութեան շարժում մը պատճառեց . լը-  
ռեցուց մախանքն ու ատելութիւնը, սրտերը միացուց և  
բերանները « Եղբայր եմք մեք » զուարթագին ձայնեցին :



Այնպիսի հոգիներ կան որոնք ծնած են սրտին լեզուն խօսելու համար . նոցա բառերն անմահ են , որովհետև սրտերուն մէջ քանդակեալ են , և Պէշիկթաշլեանը 'ի նոցանէ էր . իւր երգը ամեն մարդ երգեց , և իւր լեզուն ամեն մարդ սիրեց :

Հետզհետէ ուրիշ մատենագրական ընտիր տաղանդներ եւս աշխարհարառին գեղեցկութեանը նպաստեցին . բայց ամեն ոք իւր անձնական ճաշակին հետեւելով լեզուին մեծածաւալ դաշտին մէջ չքնաղ մտաւորական ծաղիկներ սրբուեց աստ և անդ , առանց փունջ մը կաղմելու ներդաշնակութեամբ միաւորեալ :

Բայց քանի որ աշխարհարառը կանոնագրութիւն մը չունի՝ ոչ երբեք սղորկ , սահուն և ներդաշնակ կերպարանք մը կրնայ ունենալ . այլ պիտի տեսնենք խառն 'ի խառն դրարառ դարձուածք մը ուղղախօսականին հետ , տաճկական մը առասականին հետ , գաղղիական մը աշխարհարառեանին հետ , ճշգրիտ պատկեր լեզուաց Բարխլանի :

Երբ իւրաքանչիւր ոք ըստ քմայ ոճ մը կը ձեւայնէ և կուզէ զայն ընդհանրացնել , անհնարին է կանոնաւոր լեզու մը ունենալ : Լեզու մը ըստ հաճոյից իւրաքանչիւրին չի ձեւանար , այլ հմուտ կաճառի մը պաշտօնն է այդ : Արդարև կանոններու վրայ հիմնուած լեզու մը ներդործական ազդեցութիւնը կը կրէ ժամանակին յառաջագիմական ոգւոյն և մարդկային հանճարոյ : Բայց այն փոփոխութիւններն որոնք հիմնուած են բանական օրինաց վրայ՝ ընկերութեան մտաւորական և կամ բարոյական պիտոյից կը ծառայեն . մինչդեռ երբ թելադրեալ են 'ի հաճոյից մասնաւոր անհատից առանց բարոյական և կամ մտաւորական որոշ կեդրոնի մը ձկակելու՝ շփոթութեանց շարժառիթ կ'ըլլան ընդհանրապէս :

Քանի որ լեզուն մատենագրական յառաջագիմութեան պայմաններէն մէկն է , և քանի որ մենք ընդհանուր աշխարհարառ մը չունինք տակաւին , ձեռն 'ի դործ մխելու է



Ժամ յառաջ, և հմտալից ու հայազէտ անձինքներէ ահումք մը ձեւացնելով, լեզուին դժուարին կնճխուք լուծելու է: Ուր որ հայ մատենագրութիւն մը կայ իւր ներկայացնողն ունենալու է այն ժողովին մէջ ուր լեզուին ապագան պիտի վճռուի: Ամեն զանազան հայ տարերք անդ դիմելով, իւրեանց գիտութեանց գանձերն 'ի հանդէս հանելով, զանոնք քննելով, բազդատելով, զամանս 'ի բաց նետելով, զամանս ընդունելով, զամանս 'ի մի ձուլելով, գրաբառ լեզուին անբազառ գանձերուն մէջ ընտրութիւններ ընելով, զանոնք աշխարհաբառին սեփականացնելով, կրնան վերջապէս աշխարհաբառին հիմնական գիծերը որոշել և հետզհետէ կատարելագործել:

Ուսումնական ահումք մը իւր պաշտօնին շարունակութեամբը լեզուին սղոյն պահպանութեան կը ծառայէ, և այսու եղանակաւ օգտակար երկասիրութիւնքը կը քաջալերէ, զանօգուտան կը դատապարտէ և մատենագրական ճաշակին ապականութիւնը կ'արգիլէ: Երկու կամ երեք տարի յառաջ ընկերութիւն մը կազմուեցաւ ընդ նախագահութեամբ Նար-պէյ Խորէն Եպիսկոպոսի աշխարհաբառի բարեկարգութեան համար, ամենքը յուսալից այն ընկերութեան գեղեցիկ արդեանցը կ'ըստասէին, երբ դժբազդաբար այդ ակնկալութիւնները 'ի դերեւելան ժողովքը լուծուեցաւ առանց զաշխարհաբառը քայլ մը յառաջացնելու: Այդ անյաջող փորձը մղիչ մը ըլլայ թերեւս երկրորդ լեզուագիտական հայ ահումքի կազմութեանը՝ որնոր իւր ձեռնարկութեան մէջ պնդելով և յարատեւելով իւր գործը յաջողութեամբ պսակէ:

Լեզուագիտական խնդիրները մեծ աշխատութեանց կը կարօտին, քանի որ ըստ ինքեան խնդրոյն պարունակած դժուարութիւններէն 'ի զատ բազմաթիւ խոչընդոտներ եւս կը ներկայանան՝ կարծեաց զանազանութիւններէ յառաջ եկած: Բայց եթէ ձեռնարկութեան մը կնճառս կէտերը 'ի նկատողութիւն առնուին լակ, յայնժամ վհատութիւնը ախ-



րելով ամենայն օգտաւէտ և մեծ արդեանց ծնունդը կը խա-  
փանէ, մինչդեռ անյողողող և զօրաւոր կամքին առջև ա-  
մեն արդելք հետզհետէ ուժաթափ կ'իյնայ, կ'անհետա-  
նայ, և յաղթահարող սկզբունքը բարձրավիզ կը կանգնի :

Հայերը քիչ տարիներէ 'ի վեր է միայն որ մտաւորական  
աշխարհին մէջ մտան, բնականապէս ամայի և անկարգ աշ-  
խարհ մ'է այդ, զոր իւրեանց բնական լուսովը պիտի լու-  
սաւորեն, մտաւորական աշխատութեամբ պիտի բեղմնաւո-  
րեն, և կանոններու գործադրութեամբ պիտի զօրացնեն :  
Բոլոր այս պայմաններն անտարակոյս մէկէն չեն գործադ-  
րուիր, քանի որ հին նախապաշարումները, հին գաղափար-  
ները, հին սովորութիւնները, հին շահերը արդելք կը կանգ-  
նին յառաջագիմական սկզբանց. նոցա դէմ պատերազմե-  
լով զանոնք տապալելու է, և յայնժամ անցեալին աճիւն-  
ներէն կը ծլի լուսաւորութեան յաղթահարող ոգին :

Բնական և մարդկային օրինաց սկզբունքը շարժում  
դէպ ընդ յառաջ և կարգադրութիւն է : Ժամանակը գանձ  
մ'է, որուն իւրաքանչիւր մասունքն յառաջագիմութեան  
հիւլէներ կը պարունակէ, և զորոնք ժողովրդոց առջև կը  
սփռէ իւր արագընթաց շրջանին մէջ : Այն ժողովուրդը որ  
գիտէ օգուտ քաղել ժամանակէն առանց դանդաղութեան  
և երկարաձգութեան մէջ թանկագին վայրկեաններ կորսն-  
ցընելու, անշուշտ նա պայծառ ապագայի մը կոչուած է. զի  
ժամանակին տեղացուցած բարիքը միօրինակ չեն միշտ, և  
նոցա մէկուն կորուստը անդարմանելի է շատ անդամ, զի  
ընդհատումը կրնայ ըլլալ յառաջագիմական աստիճաննե-  
րու, որով կը դատապարտուի ժողովուրդ մը յետադէմ  
կէտի մը վրայ մնալու, և ուսկից 'ի զուր կը տքնի իւր թը-  
ռիչն առնուլ դէպ 'ի բարձրագոյն աշխարհ մը : Ուստի յա-  
պաղումը կորուստ մ'է, քանի որ զրկուել է այն բարիքնե-  
րէ որոնք օգտակար շարժման մը արդիւնքն են : Արդիւնք  
մը նոր տեսութեան կեդրոն մը կրնայ ըլլալ, և բեղմնաւո-  
րելով որիչ սկզբունք մը պատճառել, և յաջորդութեամբ



բնական շարունակութիւնը ըլլալ յառաջագիմական օրինաց :

Անկարգութիւնը բնական օրէնք չէ քանի որ կը աւելնենք տիեզերաց մէջ թէ ամենայն ֆիզիքական և բարոյական պատճառ կանոնի մը կը հպատակի . ուստի ինչ որ անիշխանութեան մէջ է իւր հաւասարակչութիւնը կը գըտնայ միայն օրինաւոր կարգադրութեան մէջ , և յայնժամ կը զարգանայ ու կ'արդիւնաւորի : Քանի որ աշխարհաբառը անկարգ վիճակի մէջ է՝ 'ի նմանէ յառաջագիմութեան արդիւնքներ չեն կրնար բղխիլ բնականապէս :

Ուստի համառօտիւ խօսքերս ամփոփեմ . նախ աշխարհաբառի ձեւակերպութիւնը իբրև մեր գլխաւոր պէտքերէն մէկն համարելու է , քանի որ առանց կանոնադրութեան մը ողորկ և միակերպ ոճ մը չենք կրնար ունենալ և հետեւապէս վայելուչ մատենադրութիւն մը՝ այն կենսական հիւթը որով ժողովուրդ մը կը սնանի , կը զարգանայ , և մեծ կը հանդիսանայ : կը գտնուին այնպիսիներ որոնք լեզուն իբրև երկրորդական խնդիր կը նկատեն , առարկելով թէ լեզուն ձեւ մ'է միայն իմաստը բացատրելու . բայց նոյն իսկ յօգուտ իմաստին ձեւը աղնուացնելու է , որպէս զի անոր ամենայն կատարելութիւնները երեւան ելլան : Յետոյ կաճառի մը միջոցաւ լեզուին հիմունքը հաստատելու է , և ոչ թէ մասնաւոր անձանց կանոնադրութեամբը , որ ուրիշ նպատակի չի ծառայէր եթէ ոչ շփոթութիւնը աւելցնելու : Վերջապէս որչափ այդ ձեւնարկութիւնը ետ մնայ ճաշակը կ'ապականի , լեզուին մէջ անիշխանութիւնը կը զօրանայ , և մնասակարբ կ'արմատանայ : Ինչո՞ւ ուրեմն այդ մնասակար յապաղումը երբ ամեն վայրկեան թանկագին է , երբ նոյն կէտին վրայ կենայր յետս ընկրկիլ է , երբ արհամարհելու չէ նոյն իսկ խոնարհ աստիճան մը յառաջագիմութեան որ բարձրագունի մը կրնայ առաջնորդել , և յաջորդութեամբ հասցնել այն պայծառ և լուսաւոր կէտին՝ որուն համար նախասահմանած է Աստուած ամենայն ժողովուրդ որ եռանդագին վասն իւր բարգաւաճման կ'աշխատի :



Իցիւ թէ ազգային խանութն մղէր վաղ ընդ փայթ մեր այժմեան ազգասէր և անձնուէր սերունդը լեզուին անհարթ գաշտին մէջ, և հայկաբանից ուսումնական ակումբը տար անոր ողորկ և կանոնաւոր կերպարանք մը սփիւ հայկական ներդաշնակ ծաղիկներով:

Լաւ գիտեմ թէ զօրաւոր լեզուներ խօսած են արդէն 'ի մասին աշխարհաբառի և թէ այժմեան գրգիռս ոչ այլ ինչ է եթէ ոչ նոցա տկար արձագանքը: Սակայն մեծատարած Ռվիիանը չ'արհամարհէր ջուրի կաթիլը որ իւր անսահմանութեան մէջ կ'իյնայ դողալով և յաւէտ կը կորսուի. կաթիլն այն՝ Ռվիիանը չ'ուռձայնէր, բայց անոր անթիւ հիւլէներուն ուրիշ մը եւս կ'աւելցնէ: Հողւոյս մրմունջին ունկրնդիւր կ'ըլլամ, երբ կը նշանակէ ինձ կէտ մը որ օգտակար կը թուի Ազգիս: Ներուի ձայնիս տկարութեան, զի չէ տրբուած 'ի պարզ և ամենուն զօրաւոր լեզու մը ունենալ, և ներողամտութեամբ դատուի հրաւերս աշխարհաբառի կանոնադրութեան ձեռնարկելու:





Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.







